

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ «ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՅՔ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՌԱՊԱՇՇԱՐԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ

Ա. Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Թատերագիտության մեջ շատ է գրվել ու խոսվել Վահրամ Փափազյան-դերասանի, արվեստագետի, թատերական գործչի մասին<sup>1</sup>: Սակայն պետք է նշել, որ Վ. Փափազյանի թողած գրական ժառանգությունը պատշաճ ուշադրության չի արժանացել հայ գրականության մեջ, ոչ էլ ըստ հարկի ուսումնասիրվել է նրա ինքնատիպ լեզուն ու ոճը: Անուրանալի է, որ Փափազյան-արտիստը հեռու չէր Փափազյան-գրողից, որ ապրում էր նրա հոգում, և իսկապես բարձրարժեք է Փափազյան-արձակագրի գրական ժառանգությունը, որպես «անգնահատելի հարստություն մեր մշակույթի գանձարանում»<sup>2</sup>:

Գեղագետի անզուգական վարպետությամբ, մայրենի լեզվի հարստության և գեղեցկությունների խոր ու կատարյալ իմացությամբ նա ստեղծել է իր գեղարվեստական աշխարհը: Դրան մեծապես նպաստել է նրա ինքնատիպ լեզուն: «Լեզուն մի ժողովրդի հոգին է հնչեղ ձևի մեջ: Նա շոշափելի չլինելով հանդերձ շոշափելի է իր լսելիությամբ: Բնույթով լինելով անտեսանելի՝ նա տեսանելի է, սակայն, իր ըմբռնողականությամբ: Լեզուն ինքը՝ ժողովուրդն է, նրա կենդանի շունչը, և կյանք է շունչը»<sup>3</sup>:

Վ. Փափազյանի լեզուն այդ «հոգին է», «կենդանի շունչը», այդ «հոգու» արտացոլանքը: Նա գրում է գունեղ, կենդանի, թրթռացող, տրոփուն լեզվով՝ ստեղծելով շատ ինքնատիպ, իր բառերով ասած՝ «ինքնահատուկ», մի տեսակ «փափազյանական» ոճ, որ անկարելի է շփոթել որևէ այլ գրողի գրչի հետ:

Փափազյանի գրչին ու լեզվին մասամբ անդրադարձել է Գ. Աբաջյանը վերը նշված իր մենագրության մեջ: «Շատերը Փափազյանի ընթերցողներից գուցե առաջին անգամ հաղորդակցվեցին մեր արքայական լեզվի անբավ հարստությանը, ըմբռնեցին նրա գեղեցկությունները»<sup>4</sup>: Այսպիսի բնութագրումով է եզրափակում Գ. Աբաջյանը իր խոսքը արտիստ-գրողի մասին՝ նրա լեզվի գեղեցկությունների բացահայտումը թողնելով ժամանակին ու մասնագետներին:

Գունագեղ ու բազմաբնույթ է «Հետադարձ հայացք» հուշագրության լեզվի երանգապնակը, որի ուսումնասիրության խնդրում առանձնահատուկ կա-

<sup>1</sup> Տե՛ս «Հայ սովետական թատրոնի պատմություն», Երևան, 1967, Բ. Զարյան, Վահրամ Փափազյան, Երևան, 1972, Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Բ. Յ, Երևան, 1975, Նույնի՝ Ճրանահայ թատրոն, Բ. 1, Երևան, 1982, Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն, Երևան, 1980, Նույնի՝ Էջեր հայկական շեքսպիրապատմից, Երևան, 1981:

<sup>2</sup> Գ. Աբաջյան, Արտիստը ինչպես տեսա, Երևան, 1986, էջ 334:

<sup>3</sup> Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, Բ գիրք, Երևան, 1981, էջ 238: Այսուհետև մեջբերումներից հետո փակագծերում կնշենք հատորը (Ա կամ Բ) և էջը:

<sup>4</sup> Գ. Աբաջյան, Աշխ., էջ 336—337:

րևաբուժյուն ունի երկի բառապաշարի քննությունը, քանի որ ամեն մի գեղարվեստական ստեղծագործության հիմնական, նյութական ատաղձը բառապաշարն է. յուրաքանչյուր գրողի լեզվի ու ոճի յուրահատկությունը, լեզվական վարպետությունը առավելաբար դրսևորվում է նրա բառապաշարում, ուստի որևէ գեղարվեստական ստեղծագործության լեզուն ուսումնասիրելիս առաջնահերթ խնդիրը երկի բառապաշարի վերլուծությունն է<sup>5</sup>:

Բազմաշերտ է «Հետադարձ հայացք»-ի բառապաշարը: Հեղինակը վարպետությամբ է գործածել մեր լեզվի բառապաշարի տարբեր բառաշերտերը՝ հայոց գրական լեզվի հարուստ բառազանձը, բարբառային և ժողովրդախոսակցական բառերը, նաև՝ բազմազան փոխառություններ, օտարաբանություններ, հարկ եղած դեպքում արդի հայերենի բառակազմության բնորոշ օրինաչափություններով ստեղծել է նոր բառեր, որոնք, մեկը մյուսին լրացնելով, քաջահմուտ գրչով համագրվել են մի ընդհանուր ներդաշնակության մեջ:

Վ. Փափազյանը այն բացառիկ գրողներից է, որոնց լեզվում նրբորեն միահյուսվել են արդի գրական արևելահայերենն ու արևմտահայերենը՝ ստեղծելով մեկ խնդրակտ, ներդաշնակ հյուսվածք: Խոսքի այս հյուսվածքը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ Վ. Փափազյանը, լինելով բնիկ արևմտահայ, ապրելով ու ստեղծագործելով և՛ Կոստանդնուպոլսում, և՛ Արևելյան Հայաստանում, փայլուն կրողն ու տիրապետն էր հայոց լեզվի գրական երկու ճյուղերի հավասարապես:

Այս երևույթը շատ խոսուն ձևով մեզ հուշում է, որ արևմտահայերենն ու արևելահայերենը ոչ թե հակադրվելով օտարվում են իրարից, այլ իրենց յուրահատկություններով, իմաստների ու նրբիմաստների տարբերակված բազմազանությամբ, գույների ու նրբերանգների ծովածավալ հարստությամբ ներդաշնակում, արժեքավորում են միմյանց՝ ձևավորելով մեր ազգային լեզվի ճոխությունն ու ներթին հարուստ հնարավորությունները: Սա խոսում է նաև այն մասին, որ չպետք է անթափանց, անխորտակ պատվարներով միմյանցից անջրպետել արևմտահայերենն ու արևելահայերենը, սահմանազատել դրանք որպես առանձին-առանձին գոյություն ունեցող համակարգեր, այլ դիտել դրանք մի կենդանի, ապրող համակարգ՝ մեկը մյուսով արժեքավորվող, միևնույն լեզվամշակույթի մասեր, ենթահամակարգեր, որպես մեկ ամբողջություն, հետևաբար և՛ մեկ մտածելակերպ ու պատմություն:

«Հետադարձ հայացք»-ը հարուստ է արևմտահայերեն բառերով, արևմտահայերենին բնորոշ բառաձևերով, բառիմաստներով, դարձվածներով, որոնք հմտորեն ներհյուսված են երկի արևելահայերեն շարադրանքին:

Արևմտահայերենն իր ողջ հմայքով արտացոլվել է արևմտահայ իրականությունը ներկայացնող, նրա մշակույթն ու լեզուն կրող կերպարների խոսքում, հուշերի այն հատվածներում, ուր պատկերված է դարասկզբի արևմտահայ մշակույթի կենտրոն դարձած Կ. Պոլսի ինքնատիպ միջավայրը, պոլսահայ գողտրիկ համայնքը՝ իր նիստուկացով, վարքուբարքով, դերասանական, թատերական գործունեության վաղ շրջանը՝ համայնքի մշակութային կյանքի ու առօրյայի ընդհանուր համայնապատկերի վրա: Այս առումով հատկանշական է հետևյալ հատվածը, ուր հեղինակը նկարագրում է, թե երկար ընդմիջումից հետո ինչպես են իրեն ընդունում Պոլսի իր խաղընկերներն ու բարեկամները.

«Բոլորը թափվեցին վրաս. «Քա, աս ի՞նչ աղվորցեր ես, մյուսյու Վահրամ, Թիֆլիսի օդը, ջուրը աղեկ է, էֆենդիմ, — ջանըմ, անոնց գինին օդեն ալ օգտակար է, ջուրեն ալ, — ան չէ ամա, սա Վրույրը ո՞ղջ է, հուճութը վերնա փեք կարոտցեր եմ, կենե կը խմե՞ կոր ճենաբեթը: — Սա «Մշակը»

<sup>5</sup> Տե՛ս Լ. Եզեկյան, Գրական աշխարհաբարը և արևելահայ պատճառների լեզուն, Երեւան, 1990, էջ 199:

աշապա ինչե՞ր գրեց վրադ, ձեռքերնիս շանցնիր, քի կարդանք, հոն կլուրեն-  
րուն մեջ նորեն լոտո կը խաղա՞ն կոր, — կնիկները դեռ զիկիլա կը հագնի՞ն,  
— քա Վահրամ, Սիրանուշ ինտո՞ր է, աշկուտուն կնիկ, աս տարիքին աղջկա  
դերեր կը խաղա եղեր, Արմենյանին կնիկը նորեն անանկ աղվո՞ր է, — սա  
զգեստներդ հո՞ն կարված է, — քա սա ի՞նչ աղվոր մատնի է, մանչս, քանի՞  
կարատ կըլլա սա քարը, — բենեֆիսի՞դ նվեր տվին. շատ առատածեռն են  
սա ուսասհայերը, աստեղիները շոփ մը անգամ շեն տար, — ջանըմ խեղդեք  
պիտի շոշուխը, չեք ձգեր, որ շունչ առնե, սա լոխումը կեր, օղլում...» (Ա, 349):

Ինչպես Փափազյանը իր գրքում, այնպես էլ մենք հատվածն ամբողջու-  
թյամբ մեջ բերեցինք՝ շնանկանալով տարրալուծել ժողովրդական հոգեբանու-  
թյամբ, մտածողությամբ, դարձվածներով ու պատկերավոր արտահայտչա-  
ձևերով համեմված խոսքը և խաթարել այն անմիջական ու կենդանի տպա-  
վորությունը, որն ստեղծվում է հատվածն ընթերցելիս:

Շատ դեպքերում էլ Փափազյանը արևմտահայերենին է դիմում այս կամ  
այն կերպարը նկարագրելիս՝ մեջ բերելով նրա խոսքը: Այստեղ հարկ ենք  
համարում նշել, որ հանդես եկող բոլոր «կերպարները» իրական մարդիկ են՝  
գործընկերներ, խաղընկերներ, հարազատներ, բարեկամներ, իր կյանքի ուղ-  
րաններում մեծ դերասանին հանդիպած շատ ու շատ այլ դեմքեր: Սակայն  
Փափազյանի թափանցիկ, խորհմուտ վերլուծությունների, դիպուկ, կենդանի  
ու խտացված բնութագրումների միջոցով նրանք վերածվում են գրական կեր-  
պարների:

Ուշագրավ է արևմտահայ նշանավոր դերասան Մ. Մնակյանի հետ Փա-  
փազյանի հանդիպման, նրանց խոսք ու զրույցի նկարագրությունը.

«... իմ գիտցած աշխարհքը կը կործանվի կոր, իմ գիտցած թատրոնն  
ալ հետը: Հիմա ամեն կողմ հեղափոխություն ըլլա պիտի և ատիկա Ռուսիա-  
յեն պիտի սկսի..., իշտե աս թարգմանությունը, աս ալ բնագիրը. առ կարդա  
և եկող շաբթու սա պիեսը խաղա, ետքն ալ գնա նորեն Ռուսիա...»: Այնու-  
հետև՝ «Ծո՛, Մաթոսյա՛ն, սա Արամին ըսե... բոլոր թերթերուն մեջ ալ ծա-  
նուցում տա. Աղավնիին ըսե, որ վաղը փորձ հայտարարե, հատ ունիք նե  
ուշացեք. հոս եկուր, ծո՛, քոչո՛, սա դիմացի գազինոյն ֆիշնի շուռուպ մը  
բեր շոշուխին, ինձի ալ շաքարը քիչ խահվե մը» (Ա, 348—49):

Այլ դեպքում ծերունի վարպետը խորհուրդներ ու խրատներ է տալիս երի-  
տասարդ Փափազյանին, և նորից հնչում է ախորժալուր արևմտահայերենը.  
«Հիմա հովը ուրիշ թարաֆեն կը փշե կոր, օղլում... սա Շեքսպիրը նորեն ձեռք  
առ ու Սալվինին և Ռոսսին աղվոր մը սերտե... Ի՞նչ գործ ունիս, ճանըմ, դուն  
ժողովուրդին հետ կապվե... Անտուանը սորվե, Իբսենը ձեռքեդ մի ձգիր»  
(Ա, 212):

Արևմտահայ բառ ու բանի իսկատիպ նմուշ է Մնակյանի խոսքը՝ համեմ-  
ված ժողովրդի հոգեբանությունը ու իմաստությունը թրծված դարձվածներով.

«Աման, մուղայիթ կեցիր, շոշուխս, անոնք դժվարահաճ մարդիկ են, ճավ-  
կիթեն մեջը մազ կը փնտրեն, ամա՛՝ մեյ մը սիրեն նե՛՝ արթըխ կսիրեն: Անոնց  
հետ Պետրոսը կրցավ զուլս ելլալ, զավալը Ալիքսանյանը ռոֆով-գլխով կե-  
րան. Պինեմեճյանը փաբուջեեր ձեռքը փախավ...» (Ա, 212): Նաև՝ «... ար-  
դեն ցարի բաբուջեեր դամը ելավ, հիմա այնտեղ դումա, վաղն ալ ուրիշ գին  
պիտի ըլլա. ես շեմ տեսնար այլևս..., ես այլուրս մաղեցի, մաղն ալ կախեցի...  
դուն այսօր մեր կորյունն ես, ամա վաղը մեր առյուծը պիտի ըլլաս, ինչ կը-  
սեմ կոր նե անկեիդ օղ ըրե...: Իշտե ասիկա վերջին խրատս է, վաղը-մյուս  
օրը ես կելեմ կերթամ, ըսածներս բյութներուդ ծայրը ոլորե, քի չմոռնաս:  
... ատիկա շխաղաս նե՛՝ Մնակյանը գալիքը շտեսավ տե անանկ գնաց կրսեն.  
ատիկա փեք կյունս կուգա» (Ա, 348):

Այսպես հերթով, ընթերցողի աչքի առջև հառնում են արևմտահայ մշակույթի արժանավոր զավակներ Սիպիլի, Սիրանուշի, Մնակյանի, Պենկյանի, Ամերիկյանի, Վրույրի և շատ այլ գործիչների կերպարները՝ իրենց բնորոշ կենդանի խոսքով, հոգևրանությամբ ու մտածողությամբ, և այդ յուրատեսակ «հայելիում» անդրադառնում, վերատեղծվում է արևմտահայ աշխարհի՝ «արյունոտ վարագույրի հետև անվերադարձորեն ու հավիտյան ծածկված մոտավոր ու իրական անցյալի» հարազատ պատկերը:

Նուշագրության բառապաշարի արևմտահայերեն տարրերի մեջ ուրույն տեղ ունեն դարձվածները, որոնք հիմնականում հանդիպում են կերպարների խոսքում: Դրանցից մի քանիսին անդրադարձել ենք վերոբերյալ օրինակներում: Նշենք ևս մեկ-երկուսը բնագրից.

«... եթե հավնեցան, ձեռներեն շես խալսիւր, մեյմը բոնեն նե՛ ալ շեն թողներ...» (Ա, 321):

«Էրկան րիւր, ծո, վաղը՝ գրասենյակս մտիր՝ հինգ հարյուր լիրանոց չեկ մը տամ՝ դե դուք ալ պտըտվեցեք» (Ա, 310):

«Սա էֆենդին վրաս գրե դե՛ Սերգո ըսե, ծո՛, ինչո՞ւ փերդեն չեք բանար,....» (Ա, 308):

Խնդրո առարկա բառաշերտի ուսումնասիրության ընթացքում առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հեղինակային խոսքում գործածվող բառերի, բառաձևերի, զանազան արտահայտչաձևերի վրա՝ որպես Վ. Փափազյանի ինքնահատուկ ոճի կարևոր տարրեր: Առանձնացրել ենք այսպիսի բառախմբեր՝ 1) բառեր, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում. 2) բառեր, որոնք հանդիպում են և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում. սակայն ավելի բնորոշ են արևմտահայ տարբերակին. 3) բառեր, որոնք գոյություն ունեն երկու տարբերակում էլ, բայց ունեն իմաստային որոշակի տարբերություններ. 4) ձևային՝ հնչյունային և քերականական տարբերություններ ունեցող բառեր ու բառաձևեր:

Ստորև կքննենք նշված բառախմբերը առանձին-առանձին:

1) Հայոց լեզվի պատմությունից հայտնի է, որ զանազան լեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությամբ աշխարհաբար լեզվի զարգացումը պատմականորեն ընթացել է երկու ուղղությամբ, որի արդյունքն են գրական լեզվի արևմտահայերեն ու արևելահայերեն տարբերակները: Այս տարբերակները հիմքում լինելով ընդհանրական՝ միաժամանակ բնորոշվում են իրենց մի շարք առանձնահատկություններով: Դրանցից են արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերությունները. կան ժասնավոր գրական բառեր, որոնք հատուկ են միայն արևելյան կամ միայն արևմտյան գրական հայերենին<sup>6</sup>: Այսպես, «Հետադարձ հայացք»-ի էջերում հանդիպում են շատ բառեր, որոնք գործածական են միայն գրական արևմտահայերենում, ինչպես՝ մանչ, տղեկ, շարժանկար, կարուհի, լումայափոխ, դրամատուն, կարգախոս, վայրաշարժ, քով, քովնտի, ելեմտագետ, ելեմտական, պիճիլիկ, կորսվել, պոռալ, ընկերվարական, վար և այլն: Բնագրային օրինակներ՝ «... և ստիպված եղա մեծածախս համոզումներով թույլտվություն խնդրել կայարանապետից՝ մի ապրանքատար գնացքի վայրաշարժով հասնել ներկայացմանը...» (Բ, 54): «Արուսյակը այդպիսով ինձ համար միշտ մընաց.... մի կոբսված դրախտ, իմ ընթերցող...» (Ա, 230): «... և մանր արհեստավորների հետ նրանցում կարելի էր հաշվել... փնտրված վարպետներ, ինչպես դերձակ, ոսկերիչ, հյուան և կաբուճի, և այն էլ Փարիզում» (Բ, 325):

<sup>6</sup> Տե՛ս էդ. Աղալյան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 124:

«... նրանց էր միայն վստահվում... դրամատների... հերթապահությունը» (Ա, 61):

2) Արդի գրական հայերեսի երկու ճյուղերում կիրարկվող, սակայն ավելի հաճախ արևմտահայերենում օգտագործվող բառեր՝ իրապաշտ, սակարան, տոմարակալական, անբարո, անատակ, անգիտանալ, անսվաղ, առժամապես, կթոտ, հիմարանոց, մորթ («մաշկ» իմաստով), հացկատակ, նախակրթարան, նախընթրիք, նվագահանդես, պուպրիկ, սխալանք, ձախողանք, բնավ, իրավ, խամաճիկ, սավառնակ, դրացի, պաղ, պոռչտուք, հնհնուք (նաև՝ հընհընուք, որն իմաստով նույնպես տարբերակված է հնհնուք-ից)<sup>7</sup> և այլն: Ահա մի քանի բնագրային օրինակ. «Եվ իրավ, այնքան ժողովրդական դարձավ այդ կերպարը...» (Բ, 154): «... և կառախումբը մտավ Գերմանիայի դռներից ներս...» (Բ, 305): «... մեծ հոռս սիրելի թոռնիկը լինելով՝ ամենափոքր հասակից ապրում էի նրա տանը...» (Ա, 5): «Մի քանիսը առավոտ կանուխ մտել էին ինձ մոտ...» (Ա, 382):

Բառերի այս խմբի մեջ ենք ներառել նաև գրաբարից և միջին հայերենից ավանդված այնպիսի բառեր, որոնք քաներորդ դարի սկզբին դուրս դրվեցին արևելահայերենից, բայց արևմտահայերենում պահպանվեցին և այսօր էլ բավական կենսունակ են: Այս բառերից շատերը ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում տրվում են հնացած կամ պատմական նշումով, ինչպես՝ ատենապետ, ատենադպիր, նախարար, տնօրեն, բառնալ, անհեղի, բշկապետ, մարմնակրթանք, թաղական, թիապարտություն, իմաստասեր, կաճառ, վարժարան, քերթված, երկայն, դյուրավ, դժվարավ ևն: Հարկ է նշել, որ վերոբերյալ բառերից մի քանիսը՝ նախարար, տնօրեն, կարգախոս, վերջին տարիներին վերահաստատվեցին և իրենց կիրառությունը վերագտան արևելահայերենում:

3) Զգալի թիվ են կազմում այն բառերը, որոնք գրական լեզվի երկու ճյուղերում գործածվում են որոշակիորեն տարբերակված իմաստներով: Այսպես, նկատել բայը արևելահայերենում ունի մի քանի իմաստներ՝ «1. դժվար երևացող կամ անսպասելի մի բան տեսնել, 2. որսալ, թաքնված մի բան հայտնաբերել՝ իմանալ, գլխի ընկնել, 3. փխր. զգալ, 4. ասել, 5. նկատի ունենալ, 6. դիտողություն անել»<sup>8</sup>: Արևմտահայերենում, ի տարբերություն նշված իմաստների, ունի նաև «համարել» իմաստը: Սա ավելի ցայտուն երեւում է բնագրային օրինակներում. «Կնամեծար ու փափկանկատ սովորությունը գրեթե միշտ պատճառ է դարձել անհրավեր բռնկումների կանանց աշխարհում, որոնց պատասխանատու հանցավորը միշտ ես եմ նկատվել...» (Բ, 254): «... սակայն հաճոյակատարությունը արվեստի հարցում նկատելով վնասակար, անօգուտ, ամուլ, պարտք եմ համարում զգուշացնել բարեկամիս...» (Բ, 459—60):

Քարափ բառը, որ ունի 1. «քարածայռ, 2. գետի, լճի, ծովի քարածայռից բաղկացած ափ, 3. լեռ» իմաստները, արևմտահայերենում գործածվում է առավելաբար «նավահանգիստներում քարով պատված ծովափ» իմաստով. «Ութ օր տևող մի անտանելի ճամփորդությունից հետո խարսխեցինք Պուսի ֆաբափում» (Ա, 193):

Սովետացել բայը արևելահայերենում բացառապես ունի ներգործական բայիմաստ, իսկ արևմտահայերենում հանդես է գալիս որպես շեղոք բայ՝

<sup>7</sup> Տե՛ս Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, 1991, Երևան, էջ 204, 207 (հընհուք—սորմոք, հնհնուք—մտմտուք):

<sup>8</sup> Բառային իմաստների բացատրությունները բերվում են էդ. Աղայանի «Արդի Քայնների բացատրական բառարանից», Երևան, 1976:

արտահայտելով «սովորոտ դառնալ, մթնել» իմաստները. «1919 թվականի հունվարի 20-ի գիշերը... կարծես իմ՝ արդեն մարմնավորված «հոգու զավակը» սովորոտեց, անէացավ, տեղի տալով մի նոր ծնունդի...» (Բ, 27):

Ինքնաշարժ-ը արևելահայերենում ածականական կիրառություն ունի՝ 1. «ինքնական շարժիչով շարժման մեջ դրվող, 2. (հնց.) ինքն իրեն՝ առանց կողմնակի գործոնների շարժվող» իմաստներով: Արևմտահայերենում այս իմաստները ավելի որոշակիացել, խտացել են գոյականական իմաստի մեջ, և բառը կիրարկվում է որպես ավտոմաքիլ փոխառյալ գոյականի հայեցի տարբերակը. «Գալիս էին նրանք ինքնաթիռով, ինքնաշարժով, կառախմբով, ժամանակակից երթևեկության բոլոր միջոցներով...» (Բ, 316): «Ինքնաշարժը կերավ սահնակը» (Բ, 170):

Մականուն բառի՝ 1. մեկին տրված վերագիր անուն, 2. կեղծանուն իմաստների կողքին արևմտահայերենում բավական լայն գործածություն ունի, 3. ազգանուն իմաստ. «... պատվարժան բարեկամիս Կոթիկյան մականունը սիրվելիք ու փայփայվելիք մի գողտրիկ արարածի պատկեր էր ստեղծում երևակայությանս մեջ...» (Բ, 319):

Հայտագիր բառը իր մի շարք իմաստների կողքին արևմտահայերենում տարածված կիրառություն ունի «երեկույթի, հանդեսի ևն՝ ծրագիր» իմաստով. «... և ես մնացի երեկույթի հայտագրի վրա և նրա երկրորդ մասում» (Բ, 198):

«Պանդոկ» նշանակում է 1. «ճանապարհի վրա գտնվող իջևան, որտեղ ճանապարհորդները կարող են օթևանել և կերակրվել, 2. ցածր կարգի ռեստորան»: Իսկ արևմտահայերենում առավելապես գործածվում է «հյուրանոց» իմաստով, որը ավելի որոշակիացած, կոնկրետացած իմաստ է. «... ձմեռվա սեզոնի համար... եկա Վենետիկ... և իջա «Կապելլո» պանդոկը» (Ա, 196):

Վերը նշված բառերից մի քանիսում նկատվում է մի ընդհանուր միտում՝ արևմտահայերենում առավել ընդունելի և գործածական իմաստները սերում են բառի ընդհանուր իմաստից, որը արևմտահայերենում մասնավորվում, որոշակիանում է նոր հասկացություն, բառի նոր իմաստ արտահայտելու համար: Այդպես են նաև «հոսանուտ», «հյուծախտ» բառերը, որոնք արևելահայերենում ունեն «հոսելու հատկություն ունեցող» և «հյուծող ախտ» իմաստները, իսկ արևմտահայերենում, մասնավորապես և «Հետադարձ հայացք»-ում գործածվում են համապատասխանաբար՝ «հոսանք» և «թոքախտ» նշանակություններով:

Արևելահայերենում և արևմտահայերենում տարբերակված իմաստներ ունեցող բառերը բավական հաճախ են հանդիպում: Թվեմք ևս մի քանի օրինակ՝ փակագծերում նշելով դրանց՝ արևմտահայերենին ավելի բնորոշ իմաստները. ընկերություն (հասարկություն), գետնախնձոր (կարտոֆիլ), ձգել (թողնել, թույլ տալ), մասնավոր (հատուկ), անառակ (չար, շարահճի), պարապություն (դատարկություն), հեռապատկեր (հեռանկար), հանգուցիչ (զրավիչ), քանի (քանի որ), որով (որովհետև), միջոց (ժամանակ), ընկերական (հասարակական, հանրային), ցրտահարություն (մրսածություն), անել (փակողի), իմաստասեր (փիլիսոփա) և այլն: «... և զարմանում եմ, թե այս ծեր մոլորակը շարունակում է դեռ թավալվել միջոցի մեջ առանց ամաշելու» (Բ, 197): «... մահը, ինչ ձևի էլ որ եղած լինի այդ, ստեղծագործողի ծնունդն է, ծնունդ անմահ, քանի արմատը այդ ծնունդի իր ժամանակակիցն է, իր ժողովրդից, ցեղից, դասակարգից, մի խոսքով՝ միակ իրականությունը, որի իշխանը մահը չէ» (Բ, 59):

4) Այս խմբի մեջ ընդգրկված բառերը, ինչպես ասացինք, արևելահայերենի համեմատությամբ արևմտահայերենում բնութագրվում են ձևային՝ հնչյունական և քերականական տարբերությամբ: Սրանք հիմնականում բառի

քերականական ձևեր են կամ հնչյունական տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր համապատասխան ձևն ու տարբերակը արևելահայերենում: Սրանց մեջ առանձնացրել ենք հնչյունային կազմով տարբերվող բառերը, բայաձևերի տարբեր կազմությունները, հոլովաձևերի տարբերությունները շարահյուսական միևնույն կապակցությունների մեջ, միևնույն բառի եզակի կամ հոգնակի թվով գործածությունները: Ըստ կարգի նշենք մի քանի բնորոշ օրինակ և նմուշներ բնագրից.

ա) գիտնալ (արևելահայերենում՝ գիտենալ), հագվել (հագնվել), ճմրթվված (ճմրթված), գազինո (կազինո), իրարմով (իրարով), զարնված (զարկված), կաթնտու (կաթնատու), աղպար (աղբեր), ձենովա (Ջենովա), Բարցելոնա (Բարսելոնա), լեցնել (լցնել) ևն: «Արևից խանձված կերպարանքներ. սև սաթի նման մագեր, ճաքած (ճաքած) նուսն նման արյունաներկ շրթներ...» (Ա, 316): «... այնտեղ կային և արտիստներ: Ճիշտ է, ... անիրականալի հույսերով նմրթկված հոգիներ, բայց, վերջապես արտիստներ...» (Բ, 273): «... և գիտցիր, որ այդ կլիւի իմ բազում տարիների գերագույն վարձատրությունը» (Բ, 197):

բ) արևմտահայերենին բնորոշ է անորոշ դերբայի -իլ վերջավորությունը, որ հանդես է գալիս նաև դիմավոր ձևերում՝ «դիմահարդարվիմ», «խոսովովանիմ»: «Պետք է խոստովանիմ քեզ, սիրելի ընթերցող, որ երբեք չեմ կարողացել սառն անտարբերությամբ պատասխանել իմ հանդեպ արտահայտված սիրո որևէ զգացումի» (Ա, 368):

\* Արևմտահայերենին բնորոշ են նաև սահմանական եղանակի անցյալ կատարյալի -ավ, -ի վերջավորությունները: «Գիտեմ, թե նրանցից որը ո՞ւր ծնավ, ի՞նչ պայմանների մեջ, ի՞նչ հատկություններով է օժտված, ի՞նչ պակասություններ ունի» (Ա, 78): «... իջա նավի սանդուղքից, հավաքված ճամփորդների համակիր ողջերթներով, մանավանդ պառավ լեզիի, որը... մի խոշոր պուդոֆինգ դրավ ձեռքս» (Ա, 78): «Դժկամությամբ հրածեղտ առի այդ հյուրասեր, ազնիվ մարդկանց շրջանից...» (Բ, 268):

\* Արևմտահայերենին բնորոշ կազմություններ են ըղձական, հարկադրական, պայմանական ապառնիների հետևյալ ձևերը. «... բայց գիտե՞ս արդյոք, (ընթերցող), որ կան մեղքեր, որոնք սրբազան «վարձք» են, սիրելիս, և եթե չգիտես՝ թող երկինքը ողորմես քեզ» (Ա, 311): «... որովհետև եթե կա մի վայր, որը պետք է համեմատ ժողովրդի լեզուն իր ամբողջ լիակատար բացարձակ մաքրությամբ, դա նրա թատրոնն է» (Ա, 47): «Յոթ փականքի հետև, իմ սրբտի-սրտի մեջ պահեցի ես այդ բոլորը... ողջ էությունս դարձնելով տաճարն այդ իդեալի, որի բագինի առաջ խնկարկում է սիրտս կես դար և կխնկարկե, քանի խունկ ու կնդրուկ կա իմ բուրվառում» (Ա, 66):

\* Սահմանական եղանակի անկատար ներկան ունի յուրահատուկ կազմություն. «... իսկ հասկանալը, վերջ ի վերջո, գնահատել կնշանակի» (Բ, 274): «... ականջիս մեջ է... դերասանի պարսկերեն ռեպլիկան... «Բեգիրա դեշտ», որ քարզմանի՝ «Բռնեցեք նրան»...» (Բ, 412):

գ) Արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, որոշ գոյականներ պատկանում են -ու հոլովման՝ ժամու, դարու, ոչ ոքու. «Լինելով հայ և հայու զավակ՝ նա թատրոն շնորհեց թուրք ժողովրդին...» (Ա, 215): «Հին իմաստության «ձայն բարբառո հանապատին» է այդ մտածողը, անլսանելի դարուս աղմուկը...» (Բ, 403): «Եվ քանի որ անբասիր ու անարժաթ մարդ էր՝ շանիրավեց ոչ ոքու և ինքը տուժեց» (Ա, 327):

\* Բնորոշ են մի շարք հատուկ անունների սեռական հոլովաձևերի հետևյալ կազմությունները՝ Ղալաթիո, Նիկողիմիո, Իտալիո, Միջին Ասիո, Գեր-

մանին և այլն. «նիկողիմիո գյուղաքաղաքներից մեկում, Պարտիզականում, աշխարհ էր եկել Ծնովք Շահենը» (Ա, 276):

\* Արևմտահայերենում բառի ներգոյական հոլովի իմաստը արտահայտվում է սեռական հոլովով և մեջ կապով. «Խոսակցությունը սկսվեց արվեստի հարցերի շուրջը մեծաքանակ առևտրականի ինքնահավան ասլոմբով՝ իրականի մեջ հարյուր տոկոսով այս թատրոնի մարդը» (Բ, 269):

\* Այստեղ կուզենայինք նշել նաև այն դեպքերը, երբ միևնույն շարահյուսական կապակցության մեջ արևելահայերենում և արևմտահայերենում բառը կիրառվում է տարբեր հոլովներով. «Իմ Պոլիս գտնված (արևելահայերենում՝ Պոլսում — Ա. Պ.) ամբողջ ժամանակամիջոցում միշտ նույն հին ըզգեստներով եմ տեսել նրան» (Ա, 446): «... նա... մեղ հետ փախչում էր Պոլսից՝ հաստատվելու համար Բաբու կամ Թիֆլիս... (Բաբու կամ Թիֆլիսում (Ա, 453): «... մի ժամանակ խեղճ հայրս մխիթարվեց ապագային (ապագայում) ինձ բժիշկ տեսնելու կարճատև հույսով» (Ա, 71): «Հաջորդ օրը ցեբեկին (ցեբեկը) մեր դեսպանատնից խոսեցի Լենինգրադի հետ...» (Բ, 301):

դ) Որոշ գոյականներ, որոնց հոգնակին արևելահայերենում կազմվում է -ենք մասնիկով, արևմտահայերենում՝ -ք մասնիկով, այսպես օրինակ՝ «... գրեցի Սահակ Տեր-Գաբրիելյանի մոտ, որին պարբերաբար ուղարկել էի... արտասահմանյան թերթերի կարծիքը սովետահայ դերասանի մասին, որպես ժրպան աշակերտը իր թվանշաններն է բերում խնամքոտ ծնողին» (Բ, 367):

Երբեմն -ք հոգնակիակերտը ոչ այնքան հոգնակիության, որքան հավաքականության իմաստ է արտահայտում, ինչպես՝ հունձք, պահանջք, վարձք են: «Արյունի, բռնադատ տեղահանության և աքսորի անմիջապես հետևանք այդ բնազդը... իրենց ցավոտ սիրտը թեթևացնելու մի անգիտակից պահանջ էր միևնույն ժամանակ» (Ա, 323):

Ամբողջականության, հավաքականության իմաստ ունեն նաև արևմտահայերենին բնորոշ -ուք մասնիկով կազմված մի քանի գոյականներ, ինչպես՝ հրմշտուք, հնհնուք, պոռչուք: «Այդպիսի աղմկոտ ու ալեկոծված հանդիսարահ դեռ չեմ տեսել. բացականչություններ, հիշոցներ..., միջնարարներին, հաճախ և գործողության ընթացքին՝ ծեծկվում, հիստերիկա, բարձրաձայն ծիծաղ...» (Ա, 316):

\* Այս ենթաբաժնում կուզենայինք խոսել արևմտահայերենին հատկանշական լեզվական մեկ-երկու իրողությունների մասին ևս: Այսպես, արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, ոչինչ, ոչ ոք դերանունները հաճախ դրվում են բայի խոնարհման դրական ձևի հետ՝ արտահայտելով ժրխտական իմաստ. «Բարեկամս զնաց մեզանից անսովոր կերպով... մի այլ «թատրոնում» շարունակելու համար այն «ներկայացումը», որի վարագույրը ոչ ոք բարձրացրեց մինչև այսօր... և ոչ ոք իջեցրեց» (Բ, 22): «Իզուր բացատրեցի նրան, որ կյանքում ոչինչ կար հավիտենական, որ մարդը ինքը հավիտենական չէր...» (Բ, 137):

\* Արևմտահայերենին բնորոշ է նաև «իմ» դերանվան և -ս ստացական հոգի համատեղ կիրառությունը. իմ կյանքս, իմ ընտանիքս, իմ ուժերս, իմ երիվարիս, իմ ուղեղս, իմ թանկագինս և այլն: «Մի՛ մոռանա, իմ քանկագինս, որ անցյալի փառքը ներկայի համար վաղուց անցած ներկայացման մի պատուած աֆիշ է...» (Ա, 96):

**А. А. ПЕТРОСЯН — Западноармянский пласт лексики в языке мемуаров Ваграма Папазяна «Взгляд в прошлое».** — В статье делается попытка исследовать словарный состав, в частности, западноармянский пласт лексики мемуаров В. Папазяна, как важнейшее проявление своеобразия его языка и стиля.